



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2731

511(076)  
9-76



2-76

*Handwritten notes in the top right corner.*

# ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ

## Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

Ա. և Բ. ՏԱՐԻ

(Նւառշահութեւն և այլ ժողովածուներէջ քաղուած)

Կազմեց

պրոֆ. Ա. ՉՈՐՉՈՓԵԱՆ.

*Содержимая №32*

ԳՐԱՆ Է 30 ԿՈՊԵԿ.



ՆՈՐ-ՆԱՌԻՋԵՒԱՆ  
*Саргсиди Шеридж, Ասագանի*

Нахичевань на Дону.  
Типография С. Я. Авакова.

1906

17 JUL 2013

8131

511(076)  
2-76

78 2 SEP 2006  
20 MAY 2010

2-79 us

# ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ

510  
70-20

Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

Ա. և Բ. ՏԱՐԻ

(Եւտուշակու ժողովածուից քաղուած)

Կազմից

Ա. ՉՈՐՉՈՓԵԱՆ.

65



ՆՈՐ-ՆԱՍԻՋԵԼԱՆ  
Տպարան Սերոբբէ Աւագեանի  
1908

Ն Ա Խ Ա Պ Ա Տ Բ Ա Ս Տ Ա Կ Ա Ն Ը Ն Թ Ա Յ Բ

ԽՆԴԻՐՆԵՐ ԱՌԱՋԻՆ 100 ԹՈՒՆԲՈՎ:

Խնդիրներ 1—10 թուերով:

1. Եղբայրը 2 տարեկան է, իսկ քոյրը նրանից մի տարով մեծ: Քանիտարեկան է քոյրը:
2. Երկու տղայ իրենց ընկերոջը պատահեցան և միասին զբօսնելու գնացին: Քանի՞ հոգի զբօսնելու գնացին:
3. Մի տղայ, դպրոց գնալիս, իւր հօրից նախաճաշի համար 3 կոպ. ստացաւ: Նա մի կոպէկի խնձոր գնեց, մնացեալ փողերով— երկու բուբլիկ: Որքան արժէ ամեն մի բուբլիկը:
4. Ուսուցիչը աշակերտին սուեց նախ մէկ զրիչ, յետոյ այլ ևս 3 հատ: Որքան զրիչ աշակերտը ստացաւ:
5. Մի աղջիկ իւր ծնողքից ստացաւ 3 թերթ սպիտակ թուղթ և մի թերթ էլ իւր ընկերուհուց: Քանի՞ թերթ թուղթ ստացաւ:
6. Պատուհանը ունէր 4 ամբողջ ապակի. 3-ը կոտրուեցաւ: Ո՞րքան ամբողջ ապակի մնաց:
7. Մի աղջիկ խնձորենու տակից հաւաքեց 4 խնձոր, 2-ը կերաւ, իսկ մնացեալ խնձորները դէն ձգեց, որովհետև փտած էին: Որքան փտած խնձոր կայ:
8. Մի տանտիկին 2 զոյգ աշտանակ գնեց. մէկը կոտրուեցաւ: Որքան ամբողջ աշտանակ մնաց տանտիկնոջ մօտ:
9. Երկու եղբայր 4 խնձոր հաւասար բաժանեցին: Ամեն մէկը ո՞րքան ստացաւ:
10. Սեղանի վրայ 4 զիրք կայ. այդ զրքերի կէսը հայերէն է: Ո՞րքան հայերէն զիրք կար:
11. Մի ընտանիքի մէջ 3 տղայք կային. փոքր եղբայրը 1 տարեկան էր. քոյրը փոքր եղբօրից 3 անգամ մեծ, իսկ մեծ եղբայրը իւր քրոջից

մի տարով մեծ: Քանի տարեկան է մեծ եղբայրը:

12. Մի աղայ 2 թերթ թուղթ ունի, իսկ միւսը 2 անգամ աւելի: Ամեն մէկը սրբան թերթ կունենայ, եթէ երկրորդը առաջինին մի թերթ թուղթ ապ:

13. Մի մարդ 2 մանչ և 2 աղջիկ ունէր, ընդամենը սրբան աղայ ունէր:

14. Մի աշակերտ դպրոց հետը բերեց մի քանի խնձոր. մէկը կերտու, իսկ մնացածը հաւասարապէս բաժանեց իւր 2 ընկերոջ, տալով ամէն մէկին երկու-երկու խնձոր: Որքան խնձոր հետը բերեց:

15. Մի աղջիկ ունէր 5 կոպ., մի կոպէկի խնձոր գնեց, իսկ մնացեալ փողը հաւասարապէս 2 աղքատի տուեց: Ամեն մի աղքատ սրբան փող ստացաւ:

16. Տղին մէկը տօնածառին 5 պատկեր ընծայ ստացաւ. 3-ը ինքը առաւ, իսկ մնացեալը տուեց իւր քոյրերին, ամեն մէկին մի պատկեր: Քանի քոյր ունէր տղան:

17. Մի աղջիկ 5 խնձոր ունէր 2-ը տուեց մի եղբորը, մէկն էլ միւս եղբորը: Որքան մնաց նորա մօտ:

18. Մի ձկնորս առաջ բռնեց 2 ձուկ, իսկ մի ժամից յետոյ այլ ևս 4 ձուկ: Որքան ձուկ բռնեց:

19. Մտալածառը 2 գոյզ ոչխար գնեց. միւնույն օրը դարձեալ գնեց մի գոյզ: Որքան ոչխար գնեց ընդամենը:

20. Մի գիւղացի 6 բուբ. պարտք ունէր. նա կէսը վճարեց: Ո՞րքան վճարեց:

21. Երկու աղայ 2 հոց գնեցին. մէկը տուեց 5 կոպ., իսկ միւսը 1 կոպ.: Որքան արժէ ամեն մէկ հոցը:

22. Իմ գրպաններէից մէկի մէջ 2 ընդոյզ կայ, իսկ միւսի մէջ 2 անգամ աւելի. սրբան ընդոյզ պէտք է երկրորդ գրպանիցս գնեմ առաջին գրպանս, որ երկուսի մէջ էլ հաւասար թուով ընդոյզներ լինին. ընդհանրապէս որքան ընդոյզ ունիմ:

23. Մի աղջիկ 6 կոպէկի գնեց 1 տանձ և 2 սալօր: Որքան արժէ ամեն մի սալօրը, եթէ տանձը արժում է 2 կոպ:

24. Մի աղայ գնեց մի խնձոր, իսկ միւսը — 2 և սա իւր խնձորին տուեց 2 կոպ. աւելի, քան թէ առաջինը: Որքան փող ծախսեցին նրանք:

25. Շաբաթուայ մէջ որքան օր աշխատած կը լինի բանուորը, եթէ բացի կիրակիից այդ շաբաթում մի օր էլ տօն լինի:

26. Դպրոցում 7 դասարան կայ և աշակերտը հինգերորդումն է: Որքան տարի այլ ևս դպրոցում պէտքէ մնայ, եթէ ամեն տարի դասարանը փոխելու լինի:

27. Երեխան ունէր 7 կոպ., 2 կոպէկի մատիտ գնեց, իսկ մնացեալ փողով մի քանի տանձ, ամեն մէկին տալով մի կոպէկ: Ո՞րքան տանձ գնեց տղան:

28. Ի՞նչ թուերից կարելի է 7 թիւը ստանայ:

29. Մի աղայ ունէր ամեն մէկ ձեռքում 4 բաժակ, 3-ը ընկան կտորուեցան: Ո՞րքան մնաց 2 ձեռքում:

30. Մի աղայ իւր հօրից ստացաւ 5 կոպ., իսկ միւսը 2 կոպ. պակաս, այս փողերով 4 խնձոր գնեցին: Որքան արժէ ամեն մէկ խնձորը:

31. Մի աղջիկ 8 քարեգրիչ ունէր, չորրորդ մասը կտորուեց: Որքան էր կտորուած:

32. Հաւը շաբաթուայ մէջ 3 ձու ածեց, իսկ միւսը 2 ձու աւելի: Այդ ձուերից նախաճաշիկ պատրաստեցին և ամեն մի աղի 2 ձու տուին Որքան աղայ նախաճաշեց:

33. Հայրը իւր 2 տղոց 5 խնդիր առաջարկեց, խոտանալով ամեն մի ճիշտ վճուած խնդրի համար 2 տանձ տալ: Մէկ որդին ստացաւ 8 տանձ, իսկ միւսը 2 անգամ պակաս. քանի խնդիր չը լուծեց ամեն մէկ որդին:

34. Քանի օրուայ մէջ աղջիկը 8 երես կը թարգմանէ սուսերէնից հայերէն, եթէ օրական 4 երես թարգմանէ:

35. Մի գիւղացի քաղաքում 8 ամիս ապրեց. նա այդ ժամանակի 4-րդ մասը դռնապան էր: Ո՞րքան ժամանակ դռնապանութիւն էր անում:

36. Մի երեխայ ծառից 4 անգամ խնձոր փետեց և ամեն անգամին երկ-երկու խնձոր. իւր 2 եղբայրներից ամեն մէկին տուեց 3 խնձոր, իսկ մնացեալը հաւասարապէս — իւր 2 քոյրերին: Ո՞րքան խնձոր ստացաւ ամեն մի քոյրը:

37. Դասարանի մէջ 8 նստարան կար, չորրորդ մասը նորոգելու տարին: Քանի նստարան նորոգեցին:

38. 3 սենեակի համար գնեցին 8 աթոռ, դնուած աթոռների կէսը դանդիւում դրին, 2 աթոռ սեղանատանը, իսկ մնացեալը՝ մանկանոցում: Որքան աթոռ դրին մանկանոցում:

39. 2 աղայ 8 խնձոր գնեցին, մէկը տուեց 3 անգամ աւելի փող քան թէ միւսը: Ամեն մէկ աղայ որքան խնձոր պիտի ստանայ:

40. Աշակերտը հայերէն դասը արտագրեց 2 անգամ. սուաջին անգամ 8 երես, իսկ երկրորդ անգամ մի երես: Որքան ժամանակ բանացրեց այս աշխատանքի համար, եթէ ժամը արտագրուած էր 3 երես:

41. Մի մարդ ունէր 3 կողով սելս, ամեն մէկի մէջ 3-ական. նա ծախեց 4 հատ: Ո՞րքան այլ ևս մնաց նրա մօտ:

42. Մի կին աղքատների բաժանեց 9 կոպ., 3-ին սուեց մի մի կոպէկանոց. իսկ մնացեալներին մի մի կոպէկ աւելի, քանթէ սուաջին 3-ին: Որքան աղքատի փող սուեց:

43. Եղբայրը 9 տարեկան է, իսկ քոյրը — 3 անգամ աւելի փոքր: Եղբայրը քանի՞ տարով մեծ է իւր քրոջից:

44. 2 երեխայ ստացան 9 պաքսիմատ, երբ որ մէկը 2 պաքսիմատ կերաւ, իսկ միւսը 3, այն ժամանակ երկուսի մօտ հաւասար մնաց. Որքան ստացաւ ամեն մէկը:

45. Մի երեխայ պարտէզի մէջ 2 անգամ աւելի թիթեռնիկներ բռնեց, քան թէ մորեխ, ընդամենը 9 միջատ: Որքան մորեխ բռնեց երեխան:

46. Մի տան մէջ նոյն թուով տղայ ու աղջիկ կային: Երբ տղաներից ամեն մէկին 2 տանձ, իսկ ամեն մի աղջկան միմի տանձ տուին, այն ժամանակ դուրս եկաւ, որ տղայքը աղջիկներից 3 տանձ աւելի են ստացել: Որքան տանձ ստացան բոլոր տղայքը:

47. Մի երեխայ մի կոպէկ ունէր, նա իւր հօրից ստացաւ այլ ևս 9 կոպ., և այս փողով թուղթ գնեց: Քանի՞ թերթ թուղթ գնեց, եթէ ամեն մի թերթին մի կոպէկ սուեց:

48. 3 եղբայր միասին 10 տարեկան են. մեծը 5 տարեկ., միջինը 2 տարով պակաս մեծից: Քանի՞ տարեկան է փոքրը:

49. Մի տղայ ունէր 10 գրիչ. 4 հատ իրեն պահեց, իսկ մնացածը բաժանեց իւր քրոջը և եղբորը: Քանի՞ գրիչ ստացաւ քոյրը:

50. 2 երեխայ միասին 10 տանձ գնեցին. երբ նրանք հաւասար թուով տանձեր կերան, մէկի մօտ մնաց մի տանձ, իսկ միւսի մօտ 3 հատ: Ամեն մի տղայ որքան տանձ էր գնել:

51. 10 վեզրանոց տակաւոր 2 ծորակ ունի. եթէ սուաջին ծորակը բանանք, լեցուն տակաւոր դատարկուում է 2 ըրպէի մէջ. իսկ միւս ծորակով 5 ըրպէի մէջ: Մէկ ըրպէի մէջ քանի՞ վեզրոյ շուր սուաջին ծորակով աւելի է դուրս թափուում, քանթէ երկրորդով:

52. 2 եղբայր և մի քոյր 10 սալոր գնեցին, քոյրը սուեց մի կոպէկ, իսկ եղբայրները երկ-երկու կոպ.: Որքան սալոր պէտքէ ստանան ամեն մէկը:

53. Մի խոհարար կին 2 գրվ. տաւարի միս գնեց և 4 անգամ աւելի ոչխարի միս: Նա որքան ոչխարի միս գնեց:

54 Մի երեխայ 7 թերթ թուղթ ունէր, նա այլ ևս 2 թերթ թուղթ ստացաւ, և այդ բոլորից 3 թերթանոց տետրակներ կարեց: Քանի՞ տետրակ կարեց:

55. Հայրը իւր որդոցը խնդիրներ առաջարկեց, խոստանալով ամեն մի ճիշտ վճռուած խնդրի համար 2 ընդոյգ: Մանուկներից ամեն մէկը որքան խնդիր լուծեց, եթէ փոքր որդին մեծից 2 ընդոյգ պակաս ստացաւ, իսկ միասին 10 ընդոյգ ստացան:

56. Մրգավաճառը 10 կոպէկի տալիս էր 5 տանձ, կամ մի քանի խնձոր. բայց ամեն մի խնձորը տանձից 2 անգամ աւելի էր արժեցնում: Որքան խնձոր կտայ 10 կոպ.:

57. Մի տղայ գնեց 2 մատիտ, իսկ միւսը 5, և վերջինս իւր մատիտներին 6 կոպէկ աւելի սուեց, քան թէ սուաջինը: Որքան փող ծախսեց ամեն մի տղայ:

58. Պղնձագործը 2 թերթ պղինձ ունէր. մէկ թերթը 6 գրվ. էր քաշում, իսկ միւսը 4. այդ թերթերից կաթսաններ շինեց, և իւրաքանչիւրի համար 2 գրվ. պղինձ բանեցրեց: Քանի՞ կաթսայ շինեց:

59. Աշակերտը դասը արտագրելիս տեսաւ, որ գրքի 2 երեսը տեղաւորուում էր տետրակի 4 երեսի վրայ. նա արտագրեց ընդամենը 10 երես: Քանի՞ երես գրքից արտագրեց:

60. 3 գրվ. խոշոր աղը 6 կոպ. արժէ, իսկ 2 գրվ. մանր աղը 8 կոպ.: Խոշոր աղը մանրից քանի՞ անգամ արժան է:

61. Մի երեխայ ընդոյգներ ունէր. իւր 2 քոյրերից ամեն մէկին սուեց 3-կան ընդոյգ, եղբորը սուեց 2 հատ, իսկ մնացեալ 2-ը ինքը կերաւ: Որքան ընդոյգ ունէր երեխան:

62. Աշակերտը 2 մատիտ գնեց, ամեն մէկը 3 կոպ., և 3 քարեգրիչ — մի կոպ. և ծախողին սուեց 10 կոպ.: Քանի՞ կոպ. յետ պէտք է ստանայ:

63. Հաւը ձագեր հանեց. ձագերից 2-ին կատուն կերաւ, 3-ին ուրուրը տարաւ և ողջ մնացին այնքան, որքան կորան: Հաւը քանի՞ ձագ էր հանել:

64. Ուսուցիչը աշակերտների մէջ 10 թերթ թուղթ բաժանեց,

2 աշակերտի երկ-երկու թերթ տուեց, իսկ մնացածներին երեք-երեք: Քանի՞ աշակերտի մէջ թուղթ բաժանեց:

65. Որդին հօրից ստացաւ 10 կոպ. և գնեց 2 խնձոր մի-մի կոպ. և 2 շաքարահաց - 3 կոպ., իսկ մնացեալ փողերը 2 աղքատի տուեց հաւասարապէս: Որքան ստացաւ ամեն մէկ աղքատը:

66. Երեխան 2 տանձ գնեց և մրգավաճառին 10 կոպ. տուեց: Որքան արժէ ամեն մի տանձը, եթէ իւրաքանչիւր 5 կոպէկից նա 2 կոպ. յետ ստացաւ:

67. 3 նստարանի վրայ 10 աշակերտ է նստած. առաջինին վրայ 4 հոգի, իսկ մնացածներին ամեն մէկի վրայ հաւասար թուով: Քանի՞ աշակերտ է նստած երրորդ նստարանի վրայ:

68. Հայրը բաժանեց իւր սողոցը մէջ 10 թերթ թուղթ. մեծ որդուն տուեց բոլոր թղթի 5-րդ մասը. միջինին - մնացածի 4-րդ մասը, իսկ մնացեալը բաժանեց իւր երկու աղջիկներին մէջ: Ամեն մէկ աղջիկ սրբան թերթ ստացաւ:

69. Վերևի դարակում 6 գիրք կայ. միջինում - 4, իսկ ներքևի դարակում՝ վերևի երկու դարակում եղածներից 2 անգամ պակաս. որքան գիրք կայ ներքևի դարակում:

70. Պարանը 5 կտոր արին. առաջին կտորի երկայնութիւնը 7 արշին էր, երկրորդինը՝ առաջինից 3 արշին աւելի, երրորդը երկրորդից 4 արշին պակաս, չորրորդը 2 անգամ երրորդից կարճ, հինգերորդն էլ չորրորդից 3 անգամ երկայն: Հինգերորդ կտորի երկայնութիւնը որքան էր:

Խնդիրներ 11—20 թուերով:

71. Շրջիկ մրգավաճառը երկու կողով նարինջ էր ծախում. մէկի մէջ 10 հատ նարինջ կար, իսկ միւսի մէջ - մէկով աւելի: Առաջին կողովից նա վեց նարինջ ծախեց, իսկ երկրորդից՝ 4 հատ. որքան նարինջ մնաց երկու կողովների մէջ:

72. Մի աղայ իւր մօրից 4 դրամ ստացաւ, երեք հատ - երեք կոպէկանոց, և 1 հատ էլ երկու կոպէկանոց, այս բոլոր փողերը նա կոպէկներ դարձրեց և աղքատների բաժանեց՝ ամեն մէկին մի կոպէկ: Որքան աղքատի փող բաժանեց:

73. Կար կարողը 11 արշին կտաւից 5 մանկական շապիկներ կարեց և մի քանի սաւան. ամեն մի շապիկին գործ ածեց 1 արշին

կտաւ, իսկ ամեն մի սաւանին - 2 արշին. որքան սաւան կարուեցաւ:

74. Դահլիճի համար մի դիւթին աթոռ գնեցին. 2 պատի մօտ հնգական աթոռ շարեցին, իսկ մնացեալները սեղանի մօտ դրին. որքան աթոռ սեղանի մօտ դրին:

75. Դասարանի մէջ ամեն մի 4 նստարանի վրայ նստած է երեք աշակերտ. որքան աշակերտ էր դասարանում, եթէ մէկը եկած չէր:

76. Ամբողջ տարուայ մէջ աշակերտը 2 ամիս հիւանդ էր, 3 ամիս - գիւղում ապրեցաւ, իսկ մնացեալ ժամանակը դպրոցում էր: Այդ տարում այդ աշակերտը որքան ամիս դպրոցում եղաւ:

77. Մի կոյտի մէջ 3 ընդոյզ կայ, միւսում - 5, իսկ երրորդի մէջ - 4: Այս բոլոր ընդոյզները երեխան հաւասարապէս իւր 2 զրպանի մէջ դրեց ամեն մի զրպանում որքան ընդոյզ կայ:

78. Դպրոցի մէջ երկու դասարան կայ. առաջին դասարանում - 10 աշակերտ, իսկ երկրորդի մէջ - 3 աշակերտ աւելի: Կիրակի առաջին դասարանից տուն գնաց 4 աշակերտ, իսկ երկրորդից - 6. որքան աշակերտ մնաց դպրոցի մէջ կիրակի օրը:

79. Հայրը իւր երեք որդոց համար 13 կոպ. գունաւոր մատիտ գնեց, մեծին տուեց - 5 հատ, իսկ մնացեալը 2 որդոց սէջ հաւասարապէս բաժանեց. որքան ստացաւ փոքր որդին:

80. Առաջին դասարանի բոլոր աշակերտները նստած են 5 նստարանի վրայ: Առաջին երկու նստարաններից ամեն մէկի վրայ 2, իսկ մնացեալներից ամեն մէկի վրայ 3 հոգի. որքան աշակերտ կայ դասարանում:

81. Տօն օր աշակերտին դպրոցից տուն արձակեցին. 3 օր բանեցրեց դպրոցից ծնողների մօտ երթալու համար. մի շաբաթ տանը մնաց, և 3 օր էլ բանեցրեց վերադառնալու համար: Քանի՞ օր արձակուրդ ստացաւ:

82. Երեխան ունէր երկու դրամ, մէկը 10 կոպէկանոց, իսկ միւսը - 3 կոպէկանոց. նա հօրից, մի կոպէկ էլ ստացաւ և այս բոլոր փողով 2 տետրակ գնեց. որքան արժէ տետրակը:

83. Դասարանում 14 աշակերտ կայ. երբ նոյն դասատունը մի նոր աշակերտ էլ մտաւ, այն ժամանակ բոլոր աշակերտներին հաւասարապէս նստացրին բարձր նստարանների վրայ. որքան աշակերտ նստած էր ամեն մի նստարանի վրայ:

84. Երեխան 16 սալոր ունէր, 5 հատը ինքը կերաւ, 2-ը, որ

փտած էին, նետեց, իսկ մնացեալը իւր 3 ընկերներին բաժանեց. սրբան ստացաւ ամեն մի ընկերը:

85. Ես գնեցի 3 խնձոր, ամեն մէկը—3 կոպ. և մի քանի հատ էլ տանձ, հատը—2 կոպէկ. այս բոլորը գնելու համար ծախսեցի 3 հատ հինգ կոպէկանոց. և երկու հատ էլ երկու կոպէկանոց: Ո՞րքան տանձ գնեցի:

86. Մի աղջիկ 17 թերթ թուղթ գնեց, և այս թերթերից տետրակներ կարեց. մէկ տետրակի համար բանեցրեց 5 թերթ, իսկ մնացեալ տետրակներից ամեն մէկի համար—3 թերթ: Ո՞րքան տետրակ կարուեցաւ:

87. Աշակերտին մէկը իւր հօրից 17 կոպ. ստացաւ, և այս բոլորը փողով կամենում էր գնել 3 քարեզրիչ, հատը 2 կոպէկի և 3 մատիտ՝ հատը—4 կոպէկի. կը բաւէ՞ արդեօք նրա ունեցած փողը:

88. Մի աղջիկ 10 կոպէկանոց, 5 կոպէկանոց և 3 կոպէկանոց ունէր. նա 6 տանձ գնեց, և ամեն մի տանձին 3 կոպէկ տուեց. նրա մօտ սրբան փող մնաց:

89. Մի երեխայ 18 սալոր ունէր. իւր 4 ընկերներից ամեն մէկին տուեց 3 սալոր, իսկ մնացեալը ինքը կերաւ. սրբան սալոր կերաւ:

90. Եղբայրս 18 կոպէկի 3 խնձոր գնեց. իսկ քոյրս 12 կոպէկի 6 անուշ հաց. եղբայրս քրոջս տուեց մի խնձոր և փոխարէնը մի քանի անուշ հաց ստացաւ. սրբան հաց ստացաւ եղբայրս:

91. Ո՞րքան նստարան կը պատրաստէ ատաղձագործը երկու շաբաթուայ և 4 օրուայ մէջ, եթէ 2 օրում մի նստարան է շինում:

92. Ծանօթս մի քանի աթոռներ գնեց, որ 3 սենեակի մէջ շարեց. դահլիճում մի դիւժին. գրասենեակում—3 անգամ պակաս. իսկ ննջարանում 6 անգամ պակաս: Նա սրբան աթոռ գնեց:

93. Դահլիճում և գրասենեակում 18 աթոռ կայ. բոլոր դահլիճի աթոռները երկու անգամ աւելի են. սրբան աթոռ կայ ամէն մի սենեակում:

94. Տանտիկինը մէկ ու կէս դիւժին ափսէներ ունէր. 7 ափսէ նա կտարեց, բայց գնեց այնքան ափսէ, որ ընդամենը ունեցաւ մի դիւժին. սրբան գնեց:

95. Մի կին եկեղեցուց դուրս գալիս 12 կոպ. բաժանեց մի քանի աղքատներին. մեծերից ամեն մէկին 2 կոպ. տուեց, իսկ մի երեխայի—1 կոպ. սրբան աղքատի փող բաժանեց:

96. Բանջարապանը թոյլ տուեց մի քանի երեխաների չորսական վարունգ քաղել. երբ երեխաները քաղած վարունգները համարեցին, տեսան, որ նրանք 3 վարունգ աւելի են քաղած, ուստի և աւելորդ վարունգը բանջարապանին դարձրին. սրբան երեխաներ էին, եթէ միասին քաղեցին 19 վարունգ:

97. Եղբայրը 1 տարեկան և 7 ամսական է, իսկ քոյրը եղբօրից պակաս է 10 ամսով. քանի՞ ամսական է քոյրը:

98. Երեխան ունէր 2 հատ 10 կոպէկանոց. նա գնեց 4 քարեզրիչ՝ ամեն մէկը—2 կոպէկի, և 4 մատիտ, հատը 3 կոպէկի. սրբան փող մօտը մնաց:

99. Տանտիկինը 3 հաւ ունէր. մէկը 10 ձագ հանեց, միւսը—4 ձագ պակաս, իսկ երրորդը—երկրորդից 2 ձագ պակաս. 3 հաւը միասին սրբան ձագ հանեցին:

100. Մի երեխայ իւր մօրից ամեն շաբաթ 20 կոպ. էր ստանում և ամեն օրգարոց գնալիս ծախսում էր միշտ 3 կոպ. հաց գնելու. սրբան փող կը խնայէ 5 շաբաթուայ մէջ, եթէ կիրակի օրերը բան չգնէ:

101. Եղբայրը 1 տարեկան և 8 ամսական է. իսկ քոյրը—միայն 2 ամսական. եղբայրը քանի՞ անգամ մեծ է:

102. Բազկաթոռներ ծածկելու համար գնեցին 20 արշին կտոր. դիւանին գնաց 4 արշին, իսկ բազկաթոռներին—2 անգամ աւելի, իսկ մնացեալ կտորը հաւասարապէս բաժնեցին 8 աթոռի. ամեն մի աթոռի սրբան կտոր գնաց:

103. Վարժապետը 6 աշակերտի բաժանեց 18 թերթ թուղթ. մէկին թղթի վեցերորդ մասը տուեց, միւսին—մնացածի հինգերորդ մասը. իսկ երրորդին—չորրորդ մասը այն բոլորին, ինչ որ մնացել էր առաջին երկու աշակերտներին բաժանելուց յետոյ. մնացած թուղթը հաւասարապէս բաժանեց 3 աշակերտի: Ո՞րքան թերթ թուղթ ստացաւ 6 աշակերտներից ամեն մէկը:

104. Հայրը պարտէզից 20 հատ խնձոր բերեց. իւր զաւակներից մէկին տուեց բերած խնձորի տասներորդ մասը, միւսին—մնացածի երրորդ մասը. իսկ մնացած բոլոր խնձորը իւր շաղջիկներին բաժանեց—նրա ամեն մի աղջիկն ու տղան սրբան խնձոր ստացաւ:

105. Մի աշակերտ իւր վարժապետից մի քանի թերթ թուղթ ստացաւ: Այս թղթերի կէսը նա գործածեց դասարանական տետրակ կարելու, իսկ մնացած թղթերից 2 տետրակ կարեց, ամեն մէկը 4 թերթանոց: Ո՞րքան թուղթ ստացաւ.

Խնդիրներ 21—30 թուերով:

106. Խոհարարը ունէր 21 հատ ձու, նա առաջի օրը գործածեց 8 հատ ձու, երկրորդ օրը 9. յորքան ձու մնաց խոհարարի մօտ:

107. Ճանապարհորդը երեք շաբաթ ճանապարհին էր. 8 օր շոգենաւով գնաց. 7 օր էլ երկաթուղիով, իսկ մնացեալ օրերը կառքով. քանի՞ օր կառքով գնաց:

108. 21 արշին երկարութիւն ունեցող պարանից կտրեցին 5 արշին՝ արկղ կապելու համար. 7 արշին ճօճքի համար, իսկ մնացեալ կտորը բակուժ կապեցին լուացք չորցնելու համար: Վերջին կտորը յորքան արշին էր:

109. Դասարանում 21 աշակերտ կար. երբ այնտեղ մտաւ մի նոր աշակերտ, բոլոր աշակերտներին հաւասարապէս նստեցրին 11 նստարանների վրայ: Ամեն մի նստարանի վրայ քանի՞ աշակերտ էր նստած:

110. Գիւղացին 11 զոյգ վառեկ ունէր: Երեք մարդու նա ծախեց վեց-վեց հատ. յորքան վառեկ մնաց:

111. Խոհարարը ծառայեց 4 ամիս: Առաջին երկու ամիսներին նա ստացաւ 5-ական ըուբլի. իսկ մնացեալ երկու ամիսներին 6-ական ըուբլի: Ո՞րքան փող ստացաւ խոհարարը, եթէ նա մի ըուբլի ևս պարգև ստացաւ:

112. Աշակերտը ունէր 24 կոպ: Այս փողով նա մատիտներ գնեց, որոնցից ամեն մէկը 4 կոպ. արժէր—նրա մօտ մնաց 4 կոպ: Ո՞րքան մատիտ գնեց:

113. Մի տղայ 24 հատ ընգոյգ ունէր. իւրձեղբայրներից ամեն մէկին նա տուեց 3-ական ընգոյգ. իսկ մնացեալը իւր 3 քոյրերին հաւասարապէս բաժանեց: Ո՞րքան ստացաւ ամեն մի քոյրը:

114. Երեք տղայ 24 գրիչ գնեցին. մէկը տուեց 3 կոպ. միւսը 4 կոպ. երրորդը 5 կոպ. ամեն մի տղայ յորքան գրիչ պէտք է ստանայ:

115. 24 արշին կտաւից կտրեցին սաւաններ, ամեն մէկին զընաց 6 արշին: Այս սաւանները ծախեցին և ամեն մի սաւանից ստացան 5 ըուբլ.: Քանիսով ծախեցին բոլոր սաւանները:

116. Երկրորդ դասարանի բոլոր աշակերտները նստած են 5 նստարանի վրայ. առաջին երեք նստարանի վրայ 7-ական աշակերտ. չորրորդի վրայ 3 հատ. իսկ հինգերորդի վրայ 1 հատ: Այդ դասարանում յորքան աշակերտ կար:

117. Երկու գրագիր մի թուղթ արտագրելու համար ստացան 25 կ. մէկը գրեց 2 ժամ, իսկ միւսը—3 ժամ: Նրանք ի՞նչպէս պէտք է բաժանեն այդ փողը:

118. Երկու երեխայ 26 սալոր գնեցին. մէկը տուեց 5 կոպ. իսկ միւսը—8 կոպ. յորքան սալոր ստացաւ ամեն մէկը:

119. Խանութպանը երկու տեսակ ալիւր խառնեց. մէկից—9 գրուանքայ—2 կոպէկանոց, իսկ միւսից—4 գրուանքայ 1 կոպէկանոց. այս խառնուրդը ծախեցին և օգուտ ստացաւ 4 կոպ: Ո՞րքան արժէ խառնուրդի մի գրուանքան:

120. Մի գիւղացի միւսին տուեց 13 պարկ գարի և փող էլ նոյնպէս և փոխարէնը ստացաւ նրանից 9 պարկ ալիւր: Ո՞րքան փող տուեց, եթէ գարու պարկը արժեցրին 2 ը., իսկ ցորենի պարկը—3 ը.:

121. Խանութպանը գնեց 28 չեավերիկ ալիւր: Այս ալիւրը նա պարկեր լցրեց, ամեն մէկի մէջ 4 չեավերիկ, և ծախեց ամեն մի պարկը 3 ըուբլով: Ո՞րքան փող ստացաւ խանութպանը ալիւրը ծախելուց:

122. Տանտիկինը 2 դիւժին սեղանի սպասներ ունէր. նա գնեց այլ ևս 4 սպաս. հիւրեր կանչեց և այս բոլոր սպասները սեղանի վրայ շարեց: Նա քանի՞ սեղան պատրաստեց հիւրերի համար, եթէ ամեն մի սեղանի վրայ 7-ական սպաս դրեց:

123. Նահանջ տարուայ փետրուար ամսում 9 օր սաստիկ ցըրտեր էին. 8 օր—պայծառ ու տաք. իսկ մնացեալ օրերում անձրև էր գալիս: Ո՞րքան օր անձրև եկաւ:

124. Երեք աստղձագործ բանելչէք ստացան 29 ը. մէկը աշխատեց 3 օր, միւսը—5 օր. երրորդը 6 օր. բոլոր ստացած փողերից 1 ըուբլին նրանք միասին ծախեցին, իսկ մնացեալ փողը հաւասար բաժանեցին: Ո՞րքան փող ստացաւ ամեն մէկը:

125. Պատի վրայ կախուած էին պատկերներ: Առաջին երեք կարգում կային 4-ական պատկեր. հետեւեալվարգում—3-ական, իսկ վերջին կարգում—2-ական: Վերևում և ներքևում նաև մի մի հատ: Ո՞րքան պատկեր կար պատի վրայ:

126. Աշակերտը գնեց 8 հատ մատիտ և ծախողին տուեց մի քանի տաս կոպէկանոց: Ամեն մի մատիտին աշակերտը յորքան փող տուեց, եթէ ամեն մի տաս կոպէկանոցից 2 կոպ. յետ ստացաւ. իսկ տուած բոլոր փողերից—6 կոպէկ:

127. Մի մարդ բանուոր բռնեց 2 ըուբլի ամսական և նրան առաջուց տուեց 8 ըուբլի: Բանուորը ծառայելով տարի և երեք ամիս, հեռացաւ և ստացաւ 13 ը. փող իսկ մնացածի տեղը զգեստ: Ո՞րքան արժէր զգեստը:

128. Ծառի վրայ 20 ճնճողուկ էր նստած. նրանց մօտ նստաւ երկու անգամ 5-ական ճնճողուկ: Երբ պարտիզպանը հրացանով խփեց, սպանուած գտնուեցաւ 3 հատ, վիրաւորուած—4 անգամ աւելի. իսկ մնացածները թռան: Ո՞րքան թռան:

129. Խոհարարը իւր տիկնոջից ստացաւ 30 կոպ. այս փողի կէսով նա վարունգներ գնեց, և ամեն մի տասը հատին տուեց 5 կոպէկ: Մնացած փողի երրորդ մասը նա բանեցրեց գետնախնձոր գնելու. իսկ մնացեալ փողով նա ձուեր գնեց, ամեն մէկը 2 կոպէկով: Խոհարարը սրբան ձու և վարունգ գնեց:

130. Մայրը իւր որդոց համար 30 հատ տանձ գնեց. երեխաներից մէկին տուեց գնած տանձերի երրորդ մասը. երկրորդին—հինգերորդ մասը. երրորդին—վեցերորդ մասը. իսկ մնացածը իւր 3 աղջիկներին: Ո՞րքան տանձ ստացաւ ամեն մի աղջիկն ու տղան:

131. Տանտիկինը կէս դիւթին սեղանի զգալ գնեց, և ամեն մի զգալին 3 ըուբլի տուեց. կէս դիւթին էլ թէյի զգալ, ամեն մէկը երկու ըուբլով: Ո՞րքան փող ծախսեց տանտիկինը:

132. Յունիս ամսի հինգերորդ մասը տղան ամբանոցում անցկացրեց իւր ծանօթների մօտ. վեցերորդ մասը—քաղաքում. տասներորդը—ձանապարհին, իսկ մնացեալ ժամանակը—գիւղում, իւր ծնօղների մօտ: Ո՞րքան ժամանակ անցկացրեց գիւղում:

Խնդիրներ 31—40 թուերով:

133. Մարտ ամսում քանի՞ օր ուտում եղաւ, եթէ բացի երեք կիրակիներից, աշակերտները 3 օր բարեկենդանին արձակուեցան և մի շաբաթ էլ հաղորդուելու պատրաստուեցան:

134. Մի աշակերտ 10 կոպ. ունէր, միւսը—9 կոպ. երրորդը—12 կոպ. սրանք գնեցին 9 խնձոր, ամեն մէկը երեք հատ. մնացեալ փողերը աղքատների բաժանեցին, ամեն մէկին 2 կոպ: Ո՞րքան աղքատի բաժանեցին:

135. Դասարանի մէջ 8 նստարան կար, ամեն մէկին վրայ 4 աշակերտ. սրբան աշակերտ կար դասարանում, եթէ 6 հոգի եկած չէին:

136. Դպրոցի ննջարանում մահճակալներն երկու կարգ են շարուած և ամեն մի կարգում—16 մահճակալ: Շաբաթ օր, երբ աշակերտներից ոմանք արձակուեցան, 17 մահճակալ պարապ էր. այդ օրը սրբան աշակերտ քնեց դպրոցում:

137. Տէրը իւր ծառային տուեց 32 կոպ. պատուիրելով այդ փողով 4 լիմոն գնել. բայց ծառան լիմոն չգտաւ այդ գնով և ամեն մի լիմոնին երկու կոպէկ էժան տուեց: Նա սրբան փող յետ բերեց, եթէ գնեց 5 հատ լիմոն:

138. 33 արշին երկարութիւն ունեցող պարանից երկու անգամ վեց-վեց արշին կարեցին, և երեք անգամ էլ—հինգ-հինգ արշին. մնացած չուանից ձօճք շինեցին. սրբան արշին ձօճքի գնաց:

139. Պղնձագործը 33 Փ. պղինձ ունէր, որից նա ուզում էր 11 կաթսայ շինել հաւասար կշռով: Բայց միտքը նա փոխեց և նոյն կաթսանները մի-մի ֆունտ աւելի ծանր շինեց: Նա սրբան կաթսայ շինեց, եթէ ունեցած պղնձից մօտը մնաց միայն մի գրուանքայ:

140. Տան մէջ 34 աթոռ կայ, դահլիճում—մի դիւթին, սեղանատանը—10 հատ. իսկ մնացածը հաւասար թուով գտնվում են ննջարանում և գրասենեակում: Ո՞րքան աթոռ կայ:

141. Սառնեցին 8 գրուանքայ ալիւր—երեք կոպեկանոց, 9 գրուանքայ ալիւրի հետ, 1 կոպեկանոց. այս խառնուրդը ծախեցին և վաստակեցին 1 կոպ. սրբան արժէ խառնուրդի մի գրուանքան:

142. Երեք տղայ 34 սալոր գնեցին. մէկը տուեց 6 կոպ. երկրորդը—7 կոպ. իսկ երրորդը—4 կոպ. սրբան ստացաւ ամեն մէկը:

143. Դասարանում 6 նստարան կայ և ամեն մի նստարանի վրայ նստած են 6 աշակերտ: Ո՞րքան աշակերտ կար դասարանում, եթէ 7 հոգի չէին եկած:

144. Մի տղայ 36 կոպ. ունէր: Մէկ շաբաթուայ մէջ ամեն օր, բացի կիրակիներից, նա ծախսում էր 6 կոպ. սրբան փող մնաց նրա մօտ:

145. Առաջին դասարանում 12 նստարան կայ և ամեն մի նստարանի վրայ նստում են 3-ական աշակերտ: Երկրորդ դասարանում 9 նստարան և ամեն մէկի վրայ—4-ական աշակերտ: Ո՞ր դասարանում շատ աշակերտ կայ, և սրբան:

146. Մի խոհարար վարձուեցաւ ամսական 65 ըուբլի. 7 ամսից յետոյ նա հեռացաւ և մի ըուբլի էլ ընծայ ստացաւ: Այս բոլոր փողերից 18 ըուբլի նա ծախսեց զգեստի համար, իսկ մնացած փողով

բնակարան վարձեց: Նա սրբան ամիս մնաց բնակարանում, եթէ ամսական երեք ռուբլի էր տալիս:

147. Մի աղջիկ եկեղեցուց դուրս գալիս կամենում էր իւր բոլոր փողերը 12 աղքատի բաժանել, իւրաքանչիւրին 3 կոպ.: Բայց որովհետեւ նա միայն 9 աղքատ տեսաւ, ուստի սրանց տուեց իւր բոլոր փողը հաւասար չափով: Ամեն մի աղքատ սրբան փող ստացաւ:

148. Սանուկի մէջ 4 գրուանքայ թէյ, 4 ռուբլիանոց, խառնեցին 5 գր., 3 ռուբլիանոց, թէյի հետ. բոլոր խառնուրդը ծախեցին և ստացան 5 ռ. օգուտ. սրբան արժէր խառնուրդի գրուանքան:

149. 4 աղայ 36 տանձ գնեցին. մէկը տուեց 3 կոպ. միւսը 4 կոպ. երրորդը—5 կոպ. չորրորդը—6 կոպ. սրբան տանձ ստացաւ ամեն մէկը:

150. Տանտիկինը 3 դիւժին և մի ափսէ ունէր: Բնակարանը փոխելիս նա 8 հատ ափսէ կոտրեց: Նրա մօտ սրբան ափսէ մնաց:

151. Մի կտոր հաստ քաթանից կարեցին 2 սաւան, 9 շապիկ և մէկ արշին էլ աւելացաւ: Ամեն մէկ սաւանին գնաց 5 արշին, իսկ շապիկին—3 արշին: Կտորի մէջ սրբան արշին կար:

152. Աշակերտը արձակուրդ ստացաւ 5 շաբաթ և 4 օր. 6 օր նա քաղաքում մնաց իւր քեռու մօտ. 28 օր դիւզում իւր ծնողների մօտ. իսկ մնացեալ օրերը նա ճանապարհին անցկացրեց: Նա սրբան օր ճանապարհին մնաց:

153. 39 գր. հաց կերան 3 օրուայ մէջ հաւասար չափով: Երկու օրուայ մէջ սրբան հաց կերուեցաւ:

154. Մի աշակերտ 40 կոպէկ ունէր. նա գնեց 5 դիւժին գրիչ և 3 մատիտ—ամէն մէկը 5 կ.: Մի դիւժին գրիչին սրբան փող տուեց:

155. Եղբայրը 3 տարեկան 4 ամսական է. իսկ քոյրը—10 ամսական: Քոյրը սրբան անգամ փոքր է իւր եղբօրից:

156. Մի տանտիկին մէկու կէս դիւժին սեղանի դգալ գնեց. մէկ դիւժին—թէյի դգալ, և մի քանի հատ էլ մուրաբայի համար. ընդամենը՝ 40 հատ: Մուրաբայի դգալներին սրբան փող տուեց տանտիկինը, եթէ ամեն մէկն արժէր 4 ռուբլի:

157. Մի մարդ ճանապարհ գնաց 10 օրուան և հետն այնքան փող առաւ, որ ամեն օր կարողանայ 4 ռուբլի ծախսել: Բայց առաջին չորս օրը նա օրական պէտք ծախսէր 7 ռ.: Սրբան փող պիտի ծախսէ մնացեալ ամեն մէկ օրը, որ հետն առած փողը բաւականանայ:



158. Սառնեցին 8 գր. թէյ 3 ռուբ. և 2 գր. 8 ռուբ. և ամբողջ խառնուրդը ծախեցին առանց օգուտի ու վրասի. Սրբանով ծախեցին խառնուրդի 1 գր.:

159. 3 երեխայ գնեցին 40 սալոր, մէկը տուեց 8 կոպ. իսկ մնացած երեխաներից ամեն մէկը—6 կոպ.: Սրբան սալոր պիտի ստանայ ամեն մէկը:

160. Ատաղձագործը գործածեց մի և քառորդ գրվ. մեխ 4 արկղ շինելու համար: Սրբան մեխ գնաց ամեն մէկ արկղին եթէ 1 գր. մէջ կար 32 մեխ:

161. Մի ընտանիք ծախսում էր ամեն օր հաւասար թուով շաքար և 10 օրուայ մէջ գործածուեցաւ պուզի 8 մասը: Սրբան շաքար գործածում էին ամեն օր:

162. Գպրոցում 40 աշակերտ կար. ութերորդ մասը մնացին քաղաքում ծնողների մօտ, հինգերորդը—գնաց դիւզ, չորրորդը—ամարանոց, տասներորդ մասը արձակուրդ ստացաւ, իսկ մնացած աշակերտները ապրում էին միշտ գպրոցում: Սրբան աշակերտ չէր վայելում արձակուրդ:

Խնդիրներ 41—50 թուերով:

163. Սոհարարը գազար գնեց և ծախսեց 2 փող 15 կոպ. և մէկ 5 կոպ. և 2 դրամ 3 կոպ.: Սրբան գազար գնեց նա, եթէ ամեն մէկին վճարեց 1 կոպ.:

164. Արհեստաւորը գործածեց ինքնատեղի համար 4 կտոր պղնձի թերթ, ամեն մէկը—5 գր. և 7 կտոր—3 գրուանքանոց. սրբան պղինձ գնաց ինքնատեղի շինութեան:

165. Առաջին 2 դասարանի աշակերտները զբօսնում էին դաշտում. առաջին դասարանի աշակերտները գնում էին 14 կարգով և ամեն մի կարգում—3 աշակերտ, իսկ երկրորդ դասարանի աշակերտները գնում էին 21 կարգ, և ամեն մէկ կարգում—2 աշակերտ: Սրբան դասարանում աւելի աշակերտ կար:

166. Աշակերտը արձակուրդի ժամանակ անցկացրեց 25 օր ամարանոցում, իսկ մնացած ժամանակը մնաց քաղաքում: Քանի օր մնաց քաղաքում, եթէ արձակուրդը շարունակվում էր 6 շաբաթ:

167. Սառնեցին 4 գրուանքայ պիւր 6 կոպէկանոց, և 2 գրուանքայ 9 կոպ.: Քանիսով պէտք է ծախել խառնուրդի գրուանքան,

1007  
1926  
9926

որ ոչ օգուտ և ոչ վնաս ստացուի:

168. Երկու աղջիկ իրենց մօրից ստացան 43 հատ ընդոյգ: Երբ հաւասար թուով կերան, մէկի մօտ մնաց մի ընդոյգ, իսկ միւսի մօտ 8 ընդոյգ: Ամեն մի աղջիկ սրբան ընդոյգ ստացաւ:

169. Զինուորը 4 փաթեթ հասարակ ծխախոտ գնեց. և ամեն մի փաթեթին տուեց 11 կոպ.: Ամեն օր 2 կոպ. ծխախոտ էր բանեցնում. սրբան օրուան կը բաւականանայ ծխախոտը:

170. Դերձակը 45 արշին երկարութեան կտորից 3 սերտուկ, 4 վերարկու և մի քանի շինել կարեց. ամեն մի սերտուկին գնաց 3 արշին. վերարկուին 4 արշին, իսկ շինելին 5 արշին. սրբան շինել կարեց դերձակը:

171. Դպրոցում երկու դասարան կայ. առաջին դասարանի աշակերտները նստած են 6 նստարանի վրայ, ամեն մէկի վրայ 4 աշակերտ. իսկ երկրորդ դասարանի աշակերտները նստած են 7 նստարանի վրայ և ամեն մէկի վրայ 3 հոգի: Դպրոցում սրբան աշակերտ կար:

172. Սառնեցին 4 գր. ալիւր 3 կոպէկանոց. և 5 գր.—6 կոպէկանոց. այս բոլոր ալիւրը ծախեցին և օգուտ ստացան 3 կոպէկ. Քանի ծախեցին խառնուրդի գրուանքան:

173. Երկդասեան դպրոցի աշակերտները զոյգ-զոյգ գրօսներու գնացին: Քանի զոյգ կազմուեցաւ, եթէ առաջին դասարանում /9 աշակերտ կայ, իսկ երկրորդում 8 հոգի աւելի:

174. Գիւղական դպրոցում սովորում են աղջիկ, տղայ և մեծեր. աղջիկ 7 հոգի են. տղայք—4 անգամ աւելի, իսկ մեծերը 5-ով աւելի են աղջիկներից. սրբան սովորող կայ:

175. 47 արշին երկարութիւն ունեցող մի բակից միւս բակը աղիւսներ տանելու համար մի քանի տախտակներ շարեցին. 7 տախտակ—5 արշին երկարութիւն ունէր, իսկ մնացեալ տախտակներից ամեն մէկը 4 արշին երկարութիւն: Ո՞րքան տախտակ կար այնտեղ 4 արշինանոց:

176. Աղախինը ամսական 4 ը. ստանալով ծառայեց ամբողջ տարի ու հեռացաւ: Ո՞րքան փող նրան կը պատկանի այլ ևս ստանալու, եթէ նա առաջուց վերցրել էր 25 ը.:

177. Գիմնազիոնի երկրորդ դասարանում 29 աշակերտ կար. այնտեղ մտան այլ ևս 19 հոգի. բոլոր աշակերտներին հաւասարա-

պէս նստեցրին 8 նստարանների վրայ: Ամեն մի նստարանի վրայ սրբան աշակերտ նստեցրին:

178. Կերակրի սեղանի վրայ 48 սպաս է դրած. այն ինչ տանտիկինը միայն 3 դիւժ. խոր ափսէ, 39 հատ դանակ ու պատառաքաղ և 2 դիւժ. անձեռոցիկ ունէր: Ո՞րքան խոր ափսէ, պատառաքաղ, դանակ, անձեռոցիկ պէտք կը լինի այլևս տանտիկինը:

179. Երեք մարդ 48 ը. մի կտոր մահուդ գնեցին: Երբ բաժանեցին, մէկը ստացաւ 3 արշ. երկրորդը—8 արշ. երրորդը—5 արշ.: Ամէն մէկը քանի՞ ըուբլու մահուդ գնեց:

180. Աշակերտը արձակուրդին 12 օր ապրեցաւ եղբօր մօտ. 24 օր—հօր մօտ. 11 օր—քրոջ մօտ, իսկ մնացած ժամանակը—ընկերոջ մօտ: Ո՞րքան կեցաւ սրա մօտ, եթէ արձակուրդը 7 շաբաթ էր:

181. Երեխային տուին մի քանի կոպ. և պատուիրեցին 6 խնձոր՝ 5 կոպէկանոց, և 5 հատ տանձ՝ 4 կոպ. գնել. բայց երեխան սխալմամբ գնեց 6 տանձ և 5 խնձոր. նա սրբան փող յետ բերեց:

182. Մի տան մէջ տօնածառի երեկոյեան 50 հոգի հիւրեր կային, 8 տղամարդ, կանայք երկու անգամ աւելի, իսկ մնացածը—տղայք: Ո՞րքան տղայք կային:

183. Մի կին կամենում էր 50 կոպ. բաժանել մի քանի աղքատի, ամէն մէկին 25 կոպէկ. բայց որովհետև աղքատները 3 հոգով աւելի էին, ուստի նա փողը հաւասարապէս նրանց բաժանեց: Ո՞րքան փող տուեց ամէն մի աղքատին:

184. Սառնեցին 3 գր. ալիւր՝ 6 կոպէկանոց, 7 գր. ուրիշ տեսակ ալիւրի հետ: Այս խառնուրդը ծախեցին 50 կոպէկով և աշխատեց 4 կոպ. Ի՞նչ արժէր երկրորդ տեսակ ալիւրի գրուանքան:

185. 48 սաժէն երկարութիւն ունեցող փողոցը քարեցին 6 շաբաթուայ մէջ. առաջին շաբաթը—վեցերորդ մասը. երկրորդ շաբաթը—ութերորդ մասը. իսկ երրորդ շաբաթը—տասներկուերորդ մասը, չորրորդ շաբաթը—չորրորդ մասը. հինգերորդ շաբաթը—երրորդ մասը. սրբան սաժէն քարեցին վերջին շաբաթը:

186. Մի երեխայ 50 կոպ. ունէր. Այս փողի կէսը ծախեց գիրք գնելու, հինգերորդ մասը—մատիտի համար. իսկ մնացած փողին գնեց մի քանի նարինջ՝ 5 կոպէկանոց. սրբան նարինջ գնեց:

Խնդիրներ 51—60 թուերով:

187. Մի երեխայ կարծում էր, որ եթէ 17 հատ խնձոր գնէ, տարով ամէն մէկին 3 կոպ. իւր ունեցած փողը 1 կոպ. պակաս կը գայ: Ո՞րքան փող ունէր:

188. Տանտիկինը մի դիւժ. արծաթէ դգալ գնեց, և ամեն մի դգալին տուեց 4 ռ.: Այս իրերը գնելուց յետոյ նրա մօտ մնաց այլ ևս 4 ռուբլի: Ո՞րքան փող ունէր տանտիկինը գդալները չգնած:

189. Մի տղայ հօրից ստացաւ երկու 15 կոպէկանոց և 11 գրամ 2 կոպէկանոց. այս բոլոր փողին տետրակներ գնեց՝ ամէն մէկը 13 կոպ.: Ո՞րքան տետրակ գնեց:

190. Խաւարտավաճառը խառնեց 6 տասնեակ վարունգ—տասնեակը 3 կոպէկանոց, 7 տասնեակի հետ—տասնեակը 5 կոպ. այս խառնած վարունգը նա վաճառեց և մի կոպէկ վնաս ստացաւ: Քանի՞ ծախեց նա խառնած վարունգի տասնեակը:

191. Մի դպրոցի բոլոր աշակերտները նստած են 27 նստարանի վրայ, ամէն մէկի վրայ 2 աշակերտ. իսկ միւս դպրոցի աշակերտները նստած են 18 նստարանի վրայ, և ամէն մէկի վրայ 3 հոգի: Ո՞ր դպրոցի մէջ աւելի աշակերտ կայ:

192. Փողոցում նարինջ ծախողը ինքը ամէն մի նարինջ գնում էր 6 կոպէկի, իսկ ծախում էր 9 կոպէկով. ո՞րքան նարինջ գնեց նա, երբ բոլորը ծախելուց յետոյ 54 կոպէկ օգուտ ստացաւ:

193. Մի արհեստաւոր մի կտոր պղինձ, որ 55 գր. էր կշռում, գնեց 28 ռուբլու. այս պղինձից նա կաթսաներ շինեց, ամէն մէկը 11 գրուանքայ և հատը ծախեց 9 ռուբլու. ո՞րքան փող արհեստաւորը վաստակեց:

194. Ես 6 մատիտ գնեցի՝ 4 կոպէկանոց, 7 հատ քարեզրիչ 3 կոպէկանոց և 2 դիւժին գրիչ. այս բոլորին ես տուի 2 քսանկոպէկանոց և մի տասն և հինգ կոպէկանոց. ո՞րքան արժէ մի դիւժին գրիչը:

195. Դպրոցի համար 2 գլուխ շաքար գնեցին, ամէն մէկը—28 գրուանքայ. ո՞րքան օրուան գնաց այդ շաքարը, եթէ ամէն օր բանեցնում էին 4 գրուանքայ:

196. Երկու երեխայ գնեցին 56 հատ սալոր: Մէկը տուեց 9 կ. իսկ միւսը—5 կոպ. ո՞րքան սալոր ստացաւ ամէն մէկը:

197. 56 արշին երկարութեամբ կտաւ գնեցին. այս կտաւից

սփռոցներ պատրաստեցին. ամէն մէկը 8 արշին երկարութեամբ: Սփռոցներից ամէն մէկը ծախեցին 5 ռուբլու: Ո՞րքան փող ստացան:

198. Լուացք չորացնելու համար կապեցին 3 չուան, մէկը՝ 20 արշին, երկրորդը—25 արշին, իսկ երրորդը—12 արշին. հանգոյցների համար գնաց մէկ արշին: Ո՞րքան երկարութիւն ունեցաւ չուանը:

199. 57 գր. հաց բաժանեցին հաւասար չափով 19 բանուորի: 8 բանուոր ո՞րքան հաց ստացան:

200. Գիւղացին 2 օրուան մէջ անցաւ 57 վերստ. առաջին օրը գնաց 9 ժամ, ամեն մի ժամում  $\frac{1}{2}$  վերստ. երկրորդ օրը—7 ժամ, անցնելով ամէն մի ժամում հաւասարաչափ վերստ: Ո՞րքան վերստ գնաց մի ժամում երկրորդ օրը:

201. Մի դերձակ միտք ունէր մի կտոր մահուդից 19 սերտուկ կարել և ամեն մի սերտուկին բանեցնել 3 արշին. յետոյ միտքը փոխեց և կարեց 7 սերտուկ, իսկ մնացած կտորից կարեց մի քանի հատ վերարկու, ամէն մէկը 4 արշինից: Ո՞րքան վերարկու կարեց դերձակը:

202. Տուն շինելու համար 3 խումբ քարտաշներ կանչեցին—58 հոգի. առաջին խմբի մէջ 17 հոգի էին, իսկ երկրորդում—5 հոգի. աւելի: Ո՞րքան մարդ կար երրորդ խմբում:

203. Թէյավաճառը խառնեց 7 գր. 4 ռուբլանոց թէյը մի քանի գր. ուրիշ թէյի հետ—3 ռուբլանոց: Խառնած թէյը առանց օգուտ կամ վնաս ստանալու ծախեց 58 ռուբլու: Ո՞րքան էր կշռում այդ խառնուրդը:

204. Երեխան ունէր 59 կոպ. այս փողով նա գնեց 7 հատ մատիտ, ամէն մէկը 4 կոպէկ. 58 հատ քարեզրիչ՝ իւրաքանչիւրը 3 կոպէկ և 2 հատ տետրակ: Ո՞րքան արժէր մի տետրակը:

205. Գնեցին 2 գլուխ շաքար—մի գլուխը 27 գր. իսկ միւսը առաջինից 5 գր. աւելի էր քաշում: Առաջին շաքաթը բանեցրին 15 գր.: Քանի՞ շաքաթ կը գնայ մնացած շաքարը, եթէ շաքաթական 11 գր. բանեցնեն:

206 Մի տղայ ունէր 12 հատ 5 կոպէկանոց, նա գնեց 3 հատ շաքարահաց 4 կոպէկանոց, և 4 հատ խնձոր, ամէն մէկը 6 կոպէկի: Ո՞րքան փող մնաց երեխայի մօտ:

207. Քոյրը 60 ամսական է. իսկ եղբայրը 3 տարով մեծ է:

Քանի՞ տարեկան է եղբայրը:

208. Ուսուցիչը 60 մատիտ ունէր. առաջին դասարանի ամէն մի աշակերտին տուեց երկ-երկու մատիտ. իսկ մնացած մատիտները բաժանեց երկրորդ դասարանի 6 աշակերտներին, իւրաքանչիւրին 3 հատ: Առաջին դասարանում սրբան աշակերտ կար:

209. Ճանապարհորդը ճանապարհին էր 2 և կէս օր. նա գիշերելու անցկացրեց 17 ժամ, կայարաններում մնալու 9 ժամ, իսկ մնացեալ ժամանակը գնաց: Ո՞րքան ժամանակ գնաց:

210. Երկու երեխայ աշխատում էին միմեանցից անցնել. մէկը 4 րոպէի մէջ վազեց 56 սաժէն, միւսը—5 ր. մէջ 60 սաժէն: Նրանցից ո՞վ շուտ վազեց:

211. Աշխատաւորը ամառը վարձուեցաւ 60 րուբլու, և սկզբում իւր ոռձկի երրորդ մասը ստացաւ, իսկ յետոյ—այլևս 8 ր.: Ո՞րքան փող այլ ևս ունի ստանալու:

Խնդիրներ 61—70 թուերով:

212. Մի երեքյարկանի տուն շինեցին. երկրորդ և երրորդ յարկում գտնուում են 22 պատուհան. իսկ ներքևի յարկում—5 պատուհան պակաս: Երեք յարկում սրբան պատուհան կայ:

213. Երկու գնորդ մի խանութում մահուդ գնեցին 61 րուբլու. մէկը գնեց 7 արշին կապոյտ մահուդ—արշինը՝ 4 րուբ. միւսը—11 արշին սև մահուդ: Երկրորդ գնողը արշինին սրբան փող տուեց:

214. Մատենադարանի համար գնեցին 6 ուսերէն գիրք, Փրանսերէն 4 անգամ աւելի, իսկ հայերէն՝ 2 զրքով աւելի քան Փրանսերէնն ու ուսերէնը: Ո՞րքան գիրք գնեցին մատենադարանի համար:

215. Գերձակը մի կտոր մահուդ գնեց՝ 31 արշին. նա ինչքան փող որ ունէր, տուեց, և այլևս պարտք մնաց 19 ր.: Նրա մօտ սրբան փող կար, եթէ մահուդի արշինը արժէր 2 րուբլի:

216. Մի երեխայ դպրոց բերեց իւր պարտէզից մի քանի խընձոր և բաժանեց իւր ընկերներին. 4 հոգու նա տուեց ութ-ութ հատ. 3-ին—7-ական. իսկ 2-ին—5-ական: Ամէն մի ընկերը սրբան խնձոր ստացած կլինէր, եթէ հաւասարապէս բաժանած լինէր:

217. Գիւղացին քաղաք հասաւ 21 ժամում, ամէն մի ժամում անցնում էր 3 վերստ: Քաղաքից տուն դարձաւ նոյն ճանապարհով և

բանեցրեց միայն 9 ժամ: Մի ժամում քանի վերստ գնաց վերադառնալիս:

218. Քաշով գնեցին երկու բրոնզեայ իր. մի ջահ—19 գրուանքանոց, և մի լամբ—13 գրուանոց. բրոնզի ամէն մի գրուանքային տուին 2 րուբլի: Այս իրերը գնելու համար սրբան փող ծախսեցին:

219. Մի հացավաճառ 8 պարկ այլևս գնեց—ամէն մէկը 8 փ. այս այլևսները նա լցրեց 16 մանր պարկերի մէջ: Ո՞րքան այլևս մտաւ ամէն մի պարկի մէջ:

220. Մրգավաճառը 64 նարինջ դասաւորեց 3 կարգ. վերին կարգում 15 նարինջ. իսկ ներքևի կարգում—27: Ո՞րքան նարինջ կար միջին կարգում:

221. Երեք կար կարող 64 արշին երիզ գնեցին. մէկը տուեց 5 կոպ. միւսը—7 կոպ. երրորդը 4 կոպ.: Նրանք ի՞նչպէս պէտք է բաժանեն երիզը:

222. Շոգենաւր երկու քաղաքի մէջ եղած տարածութիւնը անցաւ 2 ժամում, ամէն մի ժամում 32 վերստ: Այդ տարածութիւնը ոտով քանի՞ ժամում կարելի է անցնել՝ եթէ ժամը 4 վերստ անուի:

223. Գնեցին 64 տակառ գարեջուր. ամէն մի սայլի վրայ դրին 4 տակառ և բերելչէք տուին ամէն մի սայլին 3 ր.: Ո՞րքան արժեց գարեջուր բերելը:

224. Մի տան երեք բնակարաններում 65 ապակի դրին: Առաջին բնակարանի 4 պատուհաններում 8-ական ապակի: Երկրորդ բնակարանի 4 պատուհաններում—6-ական. իսկ մնացեալ ապակիները դրին երրորդ բնակարանների պատուհաններում: Ո՞րքան ապակի դրին երրորդ բնակարանում:

225. Մի վաճառական 65 արշին մահուդ վաճառեց 3 հոգու. մէկին—27 արշին. երկրորդին—28. իսկ երրորդին—մնացածը: Առաջին գնողը ամէն մի 3 արշինին տուեց 4 րուբլի. երկրորդը—ամէն մի 4 արշինին 3 րուբլի. իսկ երրորդը բոլոր գնած մահուդին տուեց 8 րուբլի: Վաճառականը մահուդի իւրաքանչիւր արշինը քանի՞սով պէտք է ծախէր, որ նոյն գումարը ստանար:

227. Մի աղջիկ իւր մօրից օժիտ ստացաւ 5 և կէս դիւժին արծաթեայ դգալ. 36 հատ թէյի դգալ, 15 հատ կերակրի, իսկ մնա-

ցեալը—քաղցրեղէնի: Ո՞րքան քաղցրեղէնի դգալ ստացաւ:

227. 66 արշին կտաւից պատրաստեցին սփռոցներ. և ամէն մի սփռոցին բանեցրին 11 արշին: Այս սփռոցները ծախեցին՝ ամէն մէկը 9 ռուբլու: Ո՞րքան փող ստացան:

228. Իպրոցում 3 դասարան կայ. ամէն մի դասարանում 11 նստարան. ամէն մի նստարանի վրայ 2 աշակերտ: Այս բոլոր աշակերտներին մարմնամարզութեան դասի ժամանակ կանգնեցրին այնպէս, որ ամէն մի կարգում 6 հոգի կար: Քանի՞ կարգ կազմուեցաւ:

229. Մի երեխայ 4 տետրակ գնեց, իսկ միւսը 7, և երկուսը միասին ծախսեցին 66 կոպ.: Ամէն մի երեխայ ո՞րքան փող ծախսեց տետրակ գնելու համար:

230. Իպրոցի երեք դասարանում 67 աշակերտ կայ: Առաջին դասարանում 29 աշակերտ. իսկ երկրորդ դասարանում 6 հոգով պակաս: Ո՞րքան աշակերտ կայ երրորդ դասարանում:

231: Չորս գիւղացի շուկայում ծախեցին նոյն գնով 68 ռուբ. գարի. մէկը ծախեց 3 խտր, միւսը 4 խ. իսկ երրորդն ու չորրորդը 5-ական խտր: Ո՞րքան պէտք է ստանայ ամէն մի գիւղացին իւր ծախած գարու համար:

232. Խանութպանը գնեց <sup>3</sup>84 պարկ ալիւր, և ամէն մի պարկին տուեց 3 շրուբլի. 9 պարկ նա իրեն պահեց, իսկ մնացածը ծախեց և ամէն մի 5 պարկի համար ստացաւ 12 ռ.: Ո՞րքան արժեց խանութպանին իրեն համար թողած ալիւրը:

233. Մի տղայ սեղանի վրայ շարեց 68 զառեր 4 կարգ, այնպէս որ ամէն մի յաջորդ կարգում 2 զառ աւելի էր, քան թէ նախընթացում: Առաջին կարգում քանի՞ զառ կար:

234. Երկու ճանապարհորդ միաժամանակ դուրս եկան երկու քաղաքից. մէկը ամէն մի ժամում անցնում է 11 վերստ, իսկ երկրորդը—12 վերստ: Քանի ժամից կը հանդիպեն ճանապարհորդները, եթէ այդ քաղաքների հեռավորութիւնը 69 վերստ է:

235. Մի պարոն բանուոր վարձեց 10 շաբաթով, շաբաթը 7 ռ.: Վերջնական հաշիւ տեսելիս՝ աշխատաւորը ստացաւ 38 ռ. իսկ մնացեալ փողի փոխարէն 8 չեռովերտ հաճար: Պարոնը քանի՞ էր գնահատել ամէն մի չեռովերտը:

236. Մի գիւղացի երկաթուղու կայարանից քաղաք գնաց առաւօտեան 6 ժամին և ամէն մի ժամում անցնում էր 5 վ.: Առա-

ջին օրը գնաց մինչև երեկոյեան 8 ժամը և հանգստանալու համար բանեցրեց 6 ժամ: Իւր բարեկամի մօտ գիշերելուց յետոյ՝ նա միւս օրը ճանապարհ ընկաւ 7 ժամին. այդ օրն էլ դարձեալ հանգստութեան համար բանեցրեց 6 ժամ և քաղաք հասաւ նոյն օրը 7 ժամին: Գիւղացին վերադարձաւ երկաթուղով և նոյն կայարանը հասաւ 2 ժամում: Գնացքը մի ժամում քանի վերստ էր անցնում:

236. Ո՞րքան աղքատի կարելի հաւասարապէս բաժանել 64 կոպէկը:

238. Շոգենաւի վրայ 64 մարդ կայ. ութերորդ մասը—Փրանսիացի, 16-րդ մասը—ուսու, չորրորդ մասը—հայ, իսկ մնացեալը—անգլիացի: Ո՞րքան անգլիացի կար:

239. Մօտս եղած փողերի կէսը ես 2 զրուանքայ սուրճի տուի. չորրորդ մասը—մի գր. շաքար գնելու համար. սուրճին 16 կոպէկ աւելի թանկ տուի, քան թէ շաքարին: Ո՞րքան տուի 1 զրուանք. սուրճին:

Խնդիրներ 71—80 թուերով:

240. Երկու երեխայ 71 ընդոյդ ունին. բայց մէկը միւսից 15 ընդոյդ աւելի ունի: Ամէն մէկը ո՞րքան ընդոյդ ունի:

241. Տօնավաճառ բերին ծախելու համար 71 ձի. առաջին օրը ծախեցին 45 հատ. իսկ երկրորդ օրը մնացեալը: Երկրորդ օրը ո՞րքան ձի ծախեցին:

242. Փողոցում միքդ վաճառողի երկու կողովներից ամէն մէկում 36 դեղձ կար. այս դեղձերը նա դարսեց տուփերի մէջ. և ամէն մէկի մէջ 12 դեղձ. տուփը ծախեց 2 ռուբլու: Ո՞րքան փող ըստացաւ:

243. Մի ուսուցիչ իւր ուսանողի ամէն ամիս հաւասար չափով խնայողութիւն էր անում և մի տարուայ ընթացքում ժողովեց 72 ռուբ. 9 ամսում խնայած փողերից նա իւր որդու ուսման վարձ տուեց 39 ռ. իսկ մնացեալ փողերով վերարկու գնեց: Ո՞րքան տուեց վերարկուին:

244. Մի բանուոր օրական 9 ժամ աշխատելով 8 օրուայ մէջ մի առու փորեց 72 սաժէն երկարութեամբ: Ի՞նչպիսի երկարու-

Թեամբ առու կարող էր փորել նոյն մարզը 12 օրում, եթէ օրական 6 ժամ աշխատելու լինէր:

245. Մի դերձակ 2 կտոր մահուդ գնեց. մէկի մէջ 32 արշին կար, իսկ միւսի մէջ 8 արշին աւելի էր: Այս բոլոր մահուդից նա կարեց մի քանի ձեռք զգեստ և ամեն մի ձեռք զգեստի համար զընաց 4 արշին: Քանի՞ ձեռք զգեստ կարեց:

246. Ջրամբարի մէջ բերուած է 3 խողովակ. մէկ խողովակով ամէն մի ժամում ջուր է գալիս 5 վեդրոյ, երկրորդով—6 վ., իսկ երրորդով—7 վ.: Պարապ Ջրամբարի մէջ սրբան ջուր կը լցուի, եթէ բոլոր խողովակները 4 ժամ բանանք:

247. Մի վաճառական ծախեց 36 զր. թէյ. երկուրդը—9 պ. շաքար. երրորդը—18 պ. ընգոյզ: Վաճառողներէց ամէն մէկը իւր ապրանքի համար ստացաւ 72 բուբլի: Քանի՞ ծախուեցաւ մի զր. թէյը, մի պուդ շաքարը և մի պ. ընգոյզը:

248. Երեք աշակերտ գնեցին 3 դեստ թուղթ. մէկը տուեց 16 կոպ. միւսը—9 կոպ. երրորդը 11 կոպ.: Նրանք ինչպէս պէտք բաժանեն թուղթը:

249 Գիւղացին իւր գիւղից քաղաք գնաց: Առաջին 45 վ. նա իւր ծանօթի հետ կառքով գնաց և մի ժամում անցնում էր 9 վերստ. իսկ մնացեալ տարածութիւնը մինչև քաղաք նա ոտով գնաց՝ անցնելով ամէն ժամում 4 վերստ: Ո՞րքան ժամ գիւղացին ճանապարհ գնաց, եթէ գիւղը քաղաքից 73 վերստ հեռու էր:

250. Գիւղական դպրոցում մի սենեակի մէջ նստած են 73 աշակերտ. առաջին 9 նստարաններից ամէն մէկի վրայ նստած են 2 աշակերտ. իսկ մնացեալ նստարանների վրայ 5-ական: Ո՞րքան նստարան կայ այդ սենեակում:

251. Մի կին եկեղեցուց դուրս գալիս 9 կոպէկի շաքարահաց կամենում էր գնել. իսկ մնացեալ փողերը 13 աղքատի բաժանել ամէն մէկին 5 կոպ., բայց տեսնելով որ աղքատներ աւելի կան, քան թէ որքան ինքն էր կարծում, միաքը փոխեց և աղքատներին հաւասարապէս բաժանեց: Ո՞րքան աղքատի փող բաժանեց, եթէ ամէն մէկը 2 կոպէկ ստացաւ:

252. Թիֆլիսից միաժամանակ դուրս եկան մարդատար և ապրանքատար գնացքներ. առաջինը 3 ժամում անցնում է 75 վերստ. իսկ երկրորդը—նոյն տարածութիւնը 5 ժամում: Ո՞րքան վերստ ա-

ռաջ կանցնի մարդատար գնացքը ապրանք. գնացքից 2 ժամուայ մէջ:

253. Արհեստաւորը 75 զր. պղինձ ունէր. այս բոլոր պղինձից նա ինքնատեւ շինեց, և ամէն մի ինքնատեւի համար գործածեց 15 զր. պղինձ. այս ինքնատեւները ծախեց և ամէն մէկի համար ստացաւ 12 ը.: Բոլոր ինքնատեւները քանով ծախեց:

254. 5 բանուոր 3 շաբաթուայ մէջ վաստակեցին 75 ը. սրբան փող ստացան 4 բանուոր 2 շաբաթուայ մէջ:

255. Խառնեցին 2 զր. կաղին, որի զր. արժէր 21 կոպ. 3 զր. 11 կոպէկանոց կաղինի հետ և ծախեցին առանց օգուտ կամ վնաս ստանալու: Քանի՞ ծախեցին խառնուրդի զրուանքան:

256. Երեք խումբ աշխատաւորներ մի ախոռ շինեցին 76 բուբ. մի խմբի մէջ 7 հոգի էր. իսկ միւս երկու խմբի մէջ վեց-վեց մարդ: Ամէն մի խումբը սրբան պէտք է ստանայ:

257. Երկու քաղաքից միաժամանակ դուրս եկան ճանապարհորդներ. մէկը զնում էր ձիով և ժամը անցնում էր 13 վ. իսկ միւսը սայլով և մի ժամում զնում էր 6 վ.: Քանի՞ ժամից և սրբան տարածութեան վրայ նրանք կը հանդիպին, եթէ այդ քաղաքների հեռաւորութիւնը 76 վերստ է:

